ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2015 թվականի N 89 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ԻՋԵՎԱՆԻ ԲԿ> ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով, ի կատարումն ՀՀ Տավուշի մարզպետի՝ 2011 թվականի դեկտեմբերի 19-ի< Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների տնօրենների ընտրության/նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և ՀՀ Տավուշի մարզպետի 2007թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և ՀՀ Տավուշի մարզպետի 2007-ի թիվ 7-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին՝ թիվ 203 -Ն որոշման հավելվածով հաստատված ընթացակարգի 6-րդ կետով՝

որոշում եմ.

1.Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.
Հ.ԱԲՈՎՅԱՆ– Հանձնաժողովի նախագահ. ՀՀ Տավուշի մարզպետ
Ս.ԴԱՎԹՅԱՆ- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Կ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առող. և սոց. ապա. վարչության պետ
Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Հ.ԱՎԱԼՅԱՆ- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտողարության պետ
Ռ.ՆԵՐՍԵՍՅԱՆ- ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Վ.ԽԱՌԱՏՅԱՆ- Հանձնաժողովի քարտողար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առող. և սոց. ապա. վարչության առաջատար մասնագետ
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

27 մայիսի 2015թ.
ք. Իջևան